

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային
անվտանգության կարգավորման պետական
կոմիտեի աշխատակազմի ղեկավար
Ս.Ամանյան
« 16 » « փետրվարի » 2010 թ.

ՄԵԿ ԱՆՁԻՑ ՔԱՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության
կարգավորման պետական կոմիտե

Հասցեն ք. Երևան, Տիգրան Մեծի 4

1.2. Գնման ընթացակարգի կազմակերպման գործը համակարգող անձի

Պաշտոնը Ֆինանսահաշվապահական բաժնի գլխավոր մասնագետ

Անունը, ազգանունը Սոնա Շիրինյան

Հեռախոսը /աշխ/ 54-39-96 Ֆաքսը _____ Էլ. փոստի հասցեն _____

1.3. Գնման առարկայի տեսակը

ապրանք աշխատանք ծառայություն

1.4 Կարիքի բավարարման միջոցը

գնում վարձակալություն լիզինգ

1.5. Գնման առարկայի համառոտ նկարագիրը Միջուկային և ճառագայթային անվտանգության
փորձաքննության կատարման (փորձաքննության անցկացման, կարգավորող փաստաթղթերի
մշակման, անվտանգության գնահատման և կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության
տրամադրման) ծառայություններ

1.6. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկա-
կան կենտրոն» ՓԲԸ, տնօրենի պաշտոնակատար Ս.Ամիրջանյան

Հասցեն ք. Երևան, Տիգրան Մեծի 4

Հեռախոսը /աշխ/ (+37410) 54-17-19 Ֆաքսը _____ Էլ. փոստի

հասցեն a.amirjanyan@anra.am

1.7. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը N ՀՀ ՊԿ-ԾՁԲ - 1

Կնքման ամսաթիվը « 15 » փետրվարի 2010թ.

Գործողության ժամկետը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը


Գինը 45560681 (քառասունհինգ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար վեց հարյուր ութսունմեկ)

ՀՀ դրամ

1.8. Գնման ֆինանսավորման աղբյուրը ՀՀ պետական բյուջե 2010 թվականի

Բաժին	04	Խումբ	03	Ղաս	03	Ծրագիր	01
Լախարարություն (զերատեսչություն)		105037		Հոդված	4239		

Արձանագրության վարման
պատասխանատուի ստորագրությունը _____



N	Անվանումը (անուն, ազգանունը)	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (կցվում է)
1	2	3	4
1.	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ	ք. Երևան, Տիգրան Մեծի 4	15.02.2010 թվ. թիվ 12-Ա-26

3.4. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ

N	Անվանումը (անուն, ազգանունը)	Հասցեն	Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (կցվում է)
1	2	3	4
1.	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ	ք. Երևան, Տիգրան Մեծի 4	15.02.2010 թվ. թիվ 01-025

3.5. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո Ոչ

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո Ոչ

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները.

Այո Ոչ

3.6. Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ.

Այո Ոչ

4. Կասեցում

Կասեցրե՞լ է պատվիրատուն գնման գործընթացը.

Այո Ոչ

5. Բողոքարկում

Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո Ոչ

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո Ոչ

6. Գնման ընթացակարգի արժանագրության վարման պատասխանատու անձի

Անունը, ազգանունը Սոնա Շիրինյան
 Պաշտոնը Ֆինանսահաշվապահական բաժնի գլխավոր մասնագետ
 Հեռախոսը /աշխ/ 54-39-96 Ֆաքսը _____ Էլ. փոստի հասցեն _____

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը _____



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՈՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՍԵՃԻ 4, Հեռ. 564 014, Ֆաքս 543 997, E-mail: info@anra.am

№ 12-ՎԷ-96 15.02. 2010թ.

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության
գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի
տնօրենի պաշտոնակատար
պարոն Ա. Ամիրջանյանին

Հարգելի պարոն Ամիրջանյան

Հայտնում ենք, որ ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Հատուկ փորձաքննությունների անցկացման» ծառայություններ ըստ պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրի:

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոհիշյալ ծառայությունները:

Ծառայությունները ֆինանսավորվելու են 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին և ծառայության ընդհանուր գինը չի կարող գերազանցել դրանց ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Ծառայությունների մատուցման համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն.

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2. չպետք է դատական կարգով լինի անվճարունակ ճանաչված, չպետք է գտնվի լուծարման գործընթացում, չպետք է արգելանքի տակ ունենա պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.
3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում չպետք է՝
 - դատապարտված լինի տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
 - գնման պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած լինի կեղծ տվյալներ,

- իր գործողությամբ կամ անգործությամբ խախտած լինի գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ձեր կողմից ներկայացվող հայտը պետք է ներառի նաև Ձեր կողմից հաստատված և ստորագրված պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը, իսկ շահույթը չի կարող գերազանցել պայմանագրի գնի տաս տոկոսը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը, գնային առաջարկը և պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը:

Հարգանքով՝



Ս.Ամանյան

Ս.Ամանյան
564014



**ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ ՈԱԴԻԱՑԻՈՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
NUCLEAR & RADIATION SAFETY CENTER**

ՀՀ, 0010, Երևան, Տիգրան Մեծի 4, Հեռ./ֆաքս 54-17-19, Էլ. փոստ info@nrsc.am
#4 Tigran Mets str., Yerevan, 0010, Armenia Phone/Fax: +(37410) 54-17-19, e-mail: info@nrsc.am

Կ. 01- 025
15. 02. 2010 թ.

**ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային
անվտանգության կարգավորման պետական
կոմիտեի աշխատակազմի ղեկավար
պարոն Ս.Ամանյանին**

Հարգելի պարոն Ամանյան

Ի պատասխան Ձեր 15.02.2010թ. N 12-Ա-26 գրության, սույնով հավաստում եմք, որ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն

- ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
- դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքը արգելանքի տակ չի գտնվում,
- կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝
- դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար
- գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
- իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Կից ներկայացվում է պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը:

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնում է իր համաձայնությունը՝ Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված ծառայությունները մատուցել 45 560 681 ՀՀ դրամով:

Հարգանքով՝

Տնօրենի պաշտոնակատար՝

ՀՀ ԿԼ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՄՏԻՑ No 132 "16" 02 2010

Ա. Ամիրջանյան

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀԱՏՈՒԿ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (ՄԻՋՈՒԿԱՅԻՆ և ԾԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՍԱՐՆԻՆ ԱՅՆ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ)

1. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգության փորձաքննություն

h/h	Գնման ենթական աշխատանքի /ծառայության առանձին տեսակների և բաղադրիչների անվանումը/կամ նկարագիրը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի գինը /հազ.դրամ/	Ընդամենը /հազ.դրամ/
1.1	ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումների ներդրման շրջանակներում ՀԱԷԿ-ի կողմից ներկայացված տեխնիկական որոշումների, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի, միջուկային և ճառագայթային վտանգ ներկայացնող աշխատանքների կատարման ծրագրերի փորձաքննություն /14 տեխնիկական որոշում կամ փաստաթուղթ/:				
	- ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով գլխավոր մասնագետ		84	9.953	836.0
	- ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով առաջատար մասնագետ		56	8.531	477.7
	- ջերմահիդրավիկ պրոցեսների վերլուծության գծով առաջատար մասնագետ	մարդ-օր	84	8.531	716.6
	- ջերմահիդրավիկ պրոցեսների վերլուծության գծով առաջատար մասնագետ		56	8.531	477.7
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի գծով առաջատար մասնագետ		42	8.531	358.3
	- ամրություն և սեյսմիկ անվտանգություն գծով գլխավոր մասնագետ		30	9.953	298.6
	- ամրություն և սեյսմիկ անվտանգություն գծով մասնագետ		28	5.687	159.2
	- ռիսկի գնահատման գծով առաջատար մասնագետ		56	8.531	477.7
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			436		3,801.9
1.2	Նոր ԱԷԿ-ի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման շրջանակներում մշակված հետևյալ փաստաթղթերի փորձաքննություն. - հրապարակի գնահատում, ներառյալ սեյսմիկ բնութագրեր, տեխնոլոգիայի ընտրություն, տեխնոլոգիական և անվտանգության չափափոխիչների ընտրություն, - շրջակա միջավայրի վրա նոր ԱԷԿ-ի ազդեցության փորձաքննություն, ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդակարգի փորձաքննություն:				
	- ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով գլխավոր մասնագետ		50	9.953	497.6
	- ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով առաջատար մասնագետ		30	8.531	255.9
	- ամրություն և սեյսմիկ անվտանգություն գծով գլխավոր մասնագետ	մարդ-օր	64	9.953	637.0
	- ջերմահիդրավիկ պրոցեսների վերլուծության գծով առաջատար մասնագետ		42	8.531	358.3
	- ռիսկի գնահատման գծով առաջատար մասնագետ		50	8.531	426.5
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի գծով առաջատար մասնագետ		42	8.531	358.3
	- ռադիացիոն անվտանգության գծով գլխավոր մասնագետ		42	8.531	358.3
	- ամրություն և սեյսմիկ անվտանգություն գծով մասնագետ		30	5.687	170.6
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			350		3,062.6
1.3	ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու 21-րդ վերաբեռնավորման նեյտրոնաֆիզիկական բնութագրերի փորձաքննություն: ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ռեակտորի ակտիվ գոտու վերաբեռնավորման ծրագրի փորձաքննություն:				
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի գծով առաջատար մասնագետ	մարդ-օր	42	8.531	358.3
	- ջերմահիդրավիկ պրոցեսների վերլուծության գծով առաջատար մասնագետ		0	8.531	0.0
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի գծով մասնագետ		15	5.687	85.3
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			57		443.6

2. Կոմիտեի գործունեությունն ապահովող գիտահետազոտական աշխատանքներ

h/h	Գնման ենթական աշխատանքի /ծառայության առանձին տեսակների և բաղադրիչների անվանումը/կամ նկարագիրը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի գինը /հազ.դրամ/	Ընդամենը /հազ.դրամ/
2.1	ՀԱԷԿ-ի ռեակտորի իրանի սառը մամլումից պաշտպանության խնդրի շրջանակներում ռեակտորի իրանում և առաջին կոնտուրի շրջանառության խողովակաշարի սառը գծում ջերմատարի եռաչափ խառնման պրոցեսների մշակում և ջերմահիդրավիլի վերլուծություն:	մարդ-օր			
	- ջերմահիդրավիլի պրոցեսների վերլուծության գծով առաջատար մասնագետ		64	8.531	546.0
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի գծով առաջատար մասնագետ		21	8.531	179.1
	- ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով գլխավոր մասնագետ		10	9.953	99.5
	- ջերմահիդրավիլի պրոցեսների վերլուծության գծով մասնագետ		65	5.687	369.7
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			160		1,194.3
2.2	Նեյտրոն-միջուկային փոխազդեցության կտրվածքների գրադարանի հաշվարկ ՀԱԷԿ նոր միջուկային վառելիքի համար:	մարդ-օր			
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի գծով առաջատար մասնագետ		64	8.531	546.0
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի գծով մասնագետ		64	5.687	364.0
	- ջերմահիդրավիլի պրոցեսների վերլուծության գծով առաջատար մասնագետ		20	8.531	170.6
	- ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով գլխավոր մասնագետ		0	9.953	0.0
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			148		1,080.6
2.3	Նոր էներգաբլոկի նախագծմանը, կարգավորմանը և փորձաքննությանն ուղղված ձեռնարկի մշակում հաշվի առնելով միջազգային ժամանակակից փորձը:	մարդ-օր			
	- ամրություն և սեյսմիկ անվտանգություն գծով գլխավոր մասնագետ		53	9.953	527.5
	- ամրություն և սեյսմիկ անվտանգություն գծով մասնագետ		53	5.687	301.4
	- ռիսկի գնահատման գծով առաջատար մասնագետ		42	8.531	358.3
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի առաջատար մասնագետ		42	8.531	358.3
	- ջերմահիդրավիլի պրոցեսների վերլուծության գծով առաջատար մասնագետ		42	8.531	358.3
	- ՀԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով գլխավոր մասնագետ		42	9.953	418.0
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			274		2,321.8

3. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների միջուկային և ռադիացիոն անվտանգության հսկողության գործընթացին աջակցող աշխատանքներ

h/h	Գնման ենթական աշխատանքի /ծառայության առանձին տեսակների և բաղադրիչների անվանումը/կամ նկարագիրը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի գինը /հազ.դրամ/	Ընդամենը /հազ.դրամ/
3.1	Ճառագայթային անվտանգության պատասխանատուների որակավորման ստուգման հարցաշարի մշակում:	մարդ-օր			
	- ռադիացիոն անվտանգության գծով գլխավոր մասնագետ		10	9.953	99.5
	- ռադիացիոն անվտանգության գծով առաջատար մասնագետ		10	8.531	85.3
	- ռադիացիոն անվտանգության գծով մասնագետ		10	5.687	56.9
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			30		241.7
3.2	Միջուկային նյութերի հաշվառման և վերահսկման կարգում միջուկային նյութերի և միջուկային տեխնոլոգիաների վերաբերյալ լրացուցիչ արձանագրության պահանջների ներառում, կարգի վերամշակում:	մարդ-օր			
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի առաջատար մասնագետ		20	8.531	170.6
	- ռադիացիոն անվտանգության գծով առաջատար մասնագետ		10	8.531	85.3
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			30		255.9

h/h	ԳՆՃԱՆ ԵՆՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ /Ժառայության առանձին տեսակների և բաղադրիչների անվանումը/կամ նկարագիրը	Զափի միավորը	Ծավալը	Միավորի գինը /հազ.դրամ/	Ընդամենը /հազ.դրամ/
3.3	Կոմիտեի միջուկային տեղեկատվական համակարգի ներառյալ իրենց ներառող ճառագայթման աղբյուրների ազգային ռեգիստրի /RASOD/, լիցենզիաների և թույլտվությունների ռեգիստրի /AUTHORIZATION/, քննությունների անցկացման էլ. համակարգի /TESTING/ և միջուկային նյութերի ռեգիստրի /NUCMAT/ վարում և կատարելագործում, համակարգչային ցանցի, ներքին հեռախոսային ցանցի, ֆիզիկական պաշտպանության համակարգի, սպասարկում տարվա ընթացքում, ատոմային էներգիայի տեխնոլոգիաների և հասկացությունների էլեկտրոնային բառարանի տեխնիկական սպասարկում:	մարդ-օր			
	- ռադիացիոն անվտանգության գծով առաջատար մասնագետ		60	8.531	511.8
	- նեյտրոնաֆիզիկական պրոցեսների և միջուկային վառելիքի առաջատար մասնագետ		60	8.531	511.8
	- համակարգչային տեխնիկայի սպասարկման գծով առաջատար մասնագետ		106	8.531	904.3
	- ցանցի ադմինիստրացիայի գծով առաջատար մասնագետ		75	8.531	639.8
	- ծրագրավորող		106	9.953	1,055.0
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			407		3,622.7
3.4	Աջակցություն Կոմիտեին իրենց ներառող ճառագայթման աղբյուրների լիցենզավորման գործում տարածաշրջաններում և կենտրոնական գրասենյակում:	մարդ-օր			
	- ռադիացիոն անվտանգության գծով առաջատար մասնագետ		106	8.531	904.3
	- ռադիացիոն անվտանգության գծով մասնագետ		106	5.687	602.8
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			212		1,507.1
3.5	Տեխնիկական աջակցություն Կոմիտեի կողմից իրականացվող տեսչական ստուգումների կազմակերպմանը և անցկացմանը հետևյալ ուղղություններով. - ռադիոհիդրոտպային աղբյուրների և իրենց ներառող ճառագայթման գեներատորների ռադիոմետրիկ չափումներ, - ԶԱԷԿ-ի սեյսմիկ անվտանգության բարձրացում:	մարդ-օր			
	- ամրություն և սեյսմիկ անվտանգություն գծով զլխավոր մասնագետ		53	9.953	527.5
	- ամրություն և սեյսմիկ անվտանգություն գծով մասնագետ		53	5.687	301.4
	- ռադիացիոն անվտանգության գծով զլխավոր մասնագետ		106	9.953	1,055.0
	- ռադիացիոն անվտանգության գծով մասնագետ		106	5.687	602.8
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			318		2,486.7
3.6	Միջուկային տեղակայանքներում պատահարների վերաբերյալ հաշվետվությունների /IRS/ և միջուկային տեղեկատվության /INIS/ միջազգային համակարգերի վարում:	մարդ-օր			
	- ԶԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով զլխավոր մասնագետ		20	9.953	199.1
	- միջուկային տեղեկատվության գծով առաջատար մասնագետ		33	9.953	328.4
	- ներգրավված մասնագետ		53	8.531	452.1
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			106		979.6
3.7	ԶԱԷԿ-ի արտանախագծային և ծանր վթարների դեպքում կանխարգելիչ /PAZ/ և անհապաղ /UPZ/ պաշտպանիչ գործողությունների գոտիների սահմանների որոշում RADTRAD փաթեթի միջոցով: Վթարային վարժանքների սցենարների մշակում /1 սցենար/:	մարդ-օր			
	- ԶԱԷԿ-ի տեխնոլոգիական համակարգերի վերլուծության գծով զլխավոր մասնագետ		85	9.953	846.0
	- ջերմահիդրավիկ պրոցեսների վերլուծության գծով առաջատար մասնագետ		64	8.531	546.0
	- ջերմահիդրավիկ պրոցեսների վերլուծության գծով մասնագետ		64	5.687	364.0
	- ռադիացիոն անվտանգության գծով առաջատար մասնագետ		22	8.531	187.7
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			235		1,943.6
3.8	Ռադոն զագի ռադիոլոգիական ազդեցության ուսումնասիրություն հանրապետության տարածքում:	մարդ-օր			
	- ռադիացիոն անվտանգության գծով զլխավոր մասնագետ		22	9.953	219.0
	- ռադիացիոն անվտանգության գծով մասնագետ		42	5.687	238.9
	- վարորդ		62	3.791	235.1
	- տրանսպորտային ծախսեր		0	0.000	0.0
	- գործուղման ծախսեր		0	0.000	0.0
Ընդամենը աշխատանքի գինը /հազ.դրամ/			126		692.9

4. Նոր մասնագետի պատրաստում


h/h	Գնման ենթակամ աշխատանքի /ծառայության առանձին տեսակների և բաղադրիչների անվանումը/կամ նկարագիրը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի գինը /հազ.դրամ/	Ընդամենը /հազ.դրամ/
4.1	Նոր մասնագետների պատրաստում կոմիտեի համար /1.5 մասնագետ/:	մարդ-օր			
	- երիտասարդ մասնագետի աշխատավարձ		244	3.791	925.1
	- ուսումնական ծրագրի պատասխանատուի աշխատավարձ		53	9.953	527.5
	Ընդամենը 1.5 մասնագետների պատրաստում /հազ. դրամ/		445.5		2,178.9

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՇԻՎ

Ծախսեր և հարկեր	Գումար, հազ. դրամ
Աշխատավարձ	25,814.00
Աշխատավարձի սոց. հատկացումներ	4,310.94
Վերադիր ծախսեր 25%	6,453.50
Տրանսպորտային ծախսեր	518.80
Գործուղման ծախսեր	870.00
Ընդամենը	37,967.23
ԱԱԳ 20%	7,593.45
Ընդամենը նախահաշվային արժեք	45,560.681

Տնօրենի պաշտոնակատար՝

Ա.Ամիրջանյան






ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ
ՀՀ ՊԵՏԱՏՈՄՅԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ N ԱՕՓ – 001-2006

ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ, ԴՐԱՆՑ
ՆԱԽԱԳԾԵՐԻ և ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

Տրված

«01» Դեկտեմբերի 2006թ.

Իրավաբանական անձի անվանումը և գտնվելու վայրը «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4

Գործունեության իրականացման վայրը «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4

Լիցենզիան տրվում է մինչև

«01» Դեկտեմբերի 2011թ.

Առդիր՝

լիցենզիայի պայմաններն ու պահանջները 1 էջ



Կ.Տ

ՊԵՏԱՏՈՄՅԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա.Մարտիրոսյան

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ 33 ՊԿ - ԾՁԲ - 1**

ք. Երևան

« 15 » փետրվարի 2010թ.

ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ս. Ամանյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա.Ամիրջանյանի, որը գործում է «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել միջուկային և ճառագայթային անվտանգության փորձաքննության անցկացման, կարգավորող փաստաթղթերի մշակման, անվտանգության զնահատման և կարգավորող մարմնին այլ տեխնիկական աջակցության տրամադրման ծառայություններ, այսուհետ՝ Ծառայություններ, համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների և № 3 հավելվածով սահմանված ժամկետի /զննման ժամանակացույցի/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունների արդյունքը և վարձատրել դրա համար:
- 1.2. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ավարտման ժամկետը սահմանվում է 2010 թվականի դեկտեմբերի 15-ը: Սույն պայմանագրում նշված՝ Ծառայությունների մատուցման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նորմերին և կանոններին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող №1 հավելվածով նախատեսված Ծառայությունների տեխնիկական բնութագրին համապատասխան:

2. Կատարողի միջոցներով Ծառայությունների մատուցումը

- 2.1. Ծառայությունները մատուցվում են Կատարողի ուժերով, նյութերով և միջոցներով:
- 2.2. Կատարողը պատասխանատվություն է կրում իր կողմից մատուցված Ծառայությունների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝
 - 3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի մատուցած Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:
 - 3.1.2. Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը, և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:
 - 3.1.3. Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը:
 - 3.1.4. Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 15 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

- 3.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ճառայության արդյունքը, իսկ Ճառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:
- 3.2.2. Ճառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

- 3.3.1. Մինչև Ճառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ճառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.2 կետով նախատեսված դեպքի:
- 3.3.2. Մինչև Ճառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 15 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:
- 3.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.5 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կատարողը պարտավոր է՝

- 3.4.1. Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ճառայությունների մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:
- 3.4.2. Սույն պայմանագրի 3.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:
- 3.4.3. Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը:
- 3.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:
- 3.4.5. Եթե մատուցված ծառայությունների ընդունումից հետո ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ պատշաճ չկատարելու համար վճարում է տույժ՝ հայտնաբերված թերության վերացման համար իրականացվող փաստացի ծախսերի չափով:

4. Ճառայությունների մատուցման և ընդունման կարգը

- 4.1. Կատարողը Ճառայությունների մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ճառայությունների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված № 4):
- 4.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ճառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:
- 4.3. Կատարողի մատուցված Ճառայությունների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

5. Պայմանագրի գինը և վարձատրությունը

- 5.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 45 560 681 (քառասունհինգ միլիոն հինգ հարյուր վաթսուց հազար վեց հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ: Ճառայությունների մատուցման գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
- 5.2. Պատվիրատուն վճարում է մատուցված Ճառայությունների համար, պայմանով, եթե Ճառայությունները մատուցված են պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:
- 5.3. Ճառայությանների գինը կայուն է, և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը բացառությամբ 5.6 կետում նախատեսված դեպքի:

- 5.4. Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կատարողի ստացած խնայողությունը հավասարաչափ բաշխվում են Պատվիրատուի և Կատարողի միջև:
- 5.5. Պատվիրատուն սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության (հավելված № 4) հիման վրա՝ համաձայն սույն պայմանագրի № 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի:
- 5.6. Եթե սույն պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից 10 տոկոս բարձր, և Կատարողը չի համաձայնվում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

6. Կողմերի պատասխանատվությունը

- 6.1. Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայությունների որակի և սույն պայմանագրի № 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:
- 6.2. Սույն պայմանագրի 3.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,05 %-ի չափով:
- 6.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի չկատարված մասի գնի 0,05 %-ի չափով:
- 6.4. Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:
- 6.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:
- 6.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
- 6.8. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում, պայմանով որ՝
 - Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.
 - եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:
- 6.9. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ժամկետով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՍԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրակահիչ դրույթներ

- 8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը:
